«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման» արդիականացված համակարգի շահագործման վերապատրաստում

«Հայաստանում հաշմանդամության գնահատման գործիքակազմի և մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային փոխանակման ու միջգերատեսչական տեղեկատվության կառավարման ձևավորում» ծրագրի շրջանակում ս.թ. փետրվարի 13-ին Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում մեկնարկեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման» արդիականացված համակարգի շահագործման վերապատրաստումը՝ ՀՀ ԿԳՄՄՆ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համապատասխան մասնագետների համար: Վերապատրաստումը իրականացվեց 2 փուլով՝ փետրվար 13-ին և 24-ին:

ԱՀԿ ՖՄԴ ծածկագրերի և որակիչների կիրառման համար ՅՈՒՆԻՍԵՖ-ի «Հաշմանդամության սահմանման գործիքների ու մեթոդաբանության ներդաշնակեցում և հաշմանդամություն ունեցող երեխաների մասին միջոլորտային տեղեկատվության փոխանակման և տվյալների կառավարման համակարգի ձևավորում» ծրագրի շրջանակում «Ի. ԷՍ. ԱՅ» խորհրդատվական խումբն աջակցում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) կողմից արդիականացված ՀՀ ԿԳՄՄՆ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման» համակարգի շահագործման նպատակով ՀՀ ԿԳՄՄՆ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համապատասխան իրավասու աշխատակիցների վերապատրաստման աշխատանքների իրականացմանը:

Վերապատրաստման ընթացքում կենտրոնի աշխատակիցներին մանրամասն ներկայացվեց ՀՀ Կրթության և գիտության նախարարության ԿՏԱԿ-ի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման» արդիականացված համակարգի հիմնական գործառույթները, մասնավորապես՝

- ✓ Երեխային մասին տեղեկատվության մուտքագրում
- ✓ Վինետի ձևավորում
- ✓ Տարիքային խմբին և առկա խնդրին համապատասխան արձանագրության լրացում
- ✓ Կարիքի ՖՄԴ գնահատում
- ✓ Ֆունկցիոնալ նկարագրի լրացում
- ✓ Երեխայի համար աջակցող ծառայությունների տրամադրման անհատական ծրագրի կազմում:

ԿՏԱԿ-ի, «Ի. ԷՍ. ԱՅ» խորհրդատվական խումբի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի ներկայացուցիչները ամփոփեցին վերապատրաստման արդյունները և ձեռք բերվեց պայմանավորվածություն իրականացնել համակարգի փորձարկում (պիլոտ)՝ Ապարանի և Կոտայքի մարզերի տարածքային կենտրոններում:

Enabling Social Impact Consulting Group

Partnership for informed decision-making and positive social impact

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման» արդիականացված համակարգի շահագործման վերապատրաստում
2020 թվականի փետրվար 13 և 24